Մաքսերի և առևտրի 1994թ. գլխավոր համաձայնագրի պարտավորություններից ազատման մասին փոխհամաձայնություն

Սույնով Անդամները համաձայնում են հետևյալի մասին.

1. Ազատման կամ գոյություն ունեցող ազատումը երկարաձգելու պահանջի մեջ նկարագրվում են այն միջոցները, որոնք Անդամն առաջարկում է ձեռնարկել, քաղաքականության առանձին նպատակները, որոնց Անդամը ձգտում է հասնել, և այն պատճառները, որոնք Անդամին խանգարում են իր քաղաքականության նպատակներին հասնելու ՄԱԳՀ-1994-ով սահմանված իր պարտավորություններին համապատասխանող միջոցներով:

2. ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը գործող ցանկացած ազատում դադրեցվում է, եթե իր սպառման օրը կամ ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից երկու տարի հետո, որը որ ավելի շուտ կլինի, այն չի երկարաձգվել համաձայն վերոհիշյալ և ԱՀԿ համաձայնագրի IX Հոդվածի ընթացակարգերի:

3. Վեճերի կարգավորման փոխհամաձայնությամբ մշակված և ըստ դրա կիրառվող ՄԱԳՀ-1994-ի XXIII Հոդվածի դրույթները կարող է վկայակոչել յուրաքանչյուր Անդամ կողմից, որը համարում է, որ ՄԱԳՀ-1994-ով իրեն հասնող օգուտը վերացել կամ նվազել է՝

ա) այն Անդամի կողմից ազատման պայմանները չկատարելու հետևանքով, որին շնորհվել է ազատումը, կամ՝

բ) ազատման պայմաններին համապատասխանող միջոցի կիրառման հետևանքով: